ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/106

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Նոր Գեղիի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ին անհապաղ տրամադրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. շտկման արդյունքում ներկայացրած փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.09.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 23.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/106 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին, 16.10.2020թ.-ին և 22.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.10.2020թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2020թ.-ին:

2. «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն 23.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքապետարանի կարիքների համար՝ «ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին

մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 2.1 կետի համաձայն՝

Հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ. կայացրած որոշումը՝ դադարեցնել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Իսկ նույն արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել գնահատման գործընթացը և նույն օրը <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում 22.09.2020թ. հրապարակվում է գնահատող հանձնաժողովի կողմից 17.09.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրություն, որի 1.2 կետի համաձայն <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, իսկ 2.1 կետի համաձայն <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից /ընտրված մասնակից/:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում 18.09.2020թ. «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Նախ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 2.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ. կայացրած որոշումը՝ որոշել է դադարեցնել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Իսկ նույն արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել գնահատման գործընթացը և նույն օրը <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար:

Եվ միայն www.gnumner.am համացանցային կայքում 22.09.2020թ. հրապարակված գնահատող հանձնաժողովի կողմից 17.09.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 1.2 կետից պարզ է դառնում, որ <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, իսկ 2.1 կետի համաձայն <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից /ընտրված մասնակից/:

Մինչդեռ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն 17.09.2020թ. և 18.09.2020թ. գնահատող հանձնաժողովին է ներկայացրել փաստաթղթերի պահանջի դիմում /կցվում է/, որով խնդրել ենք ներկայացնել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. շտկման արդյունքում ներկայացրած փաստաթղթերը:

Այնինչ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Արդյունքում, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովին խնդրել է անհապաղ տրամադրել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. շտկման արդյունքում ներկայացրած փաստաթղթերը, որը մինչ օրս գնահատող հանձնաժողովի կողմից չի ներկայացվել մեզ:»:

Ելնելով վերոգրյալից, «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ին անհապաղ տրամադրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. շտկման արդյունքում ներկայացրած փաստաթղթերը:

Ընկերությունը 05.10.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ Կոտայքի մարզի Նոր գեղիի համայնքապետարանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/106 ծածկագրով բողոքի վերաբերյալ 30.09.2020թ. թվագրված դիրքորոշմանը, մասնավորապես այն հանգամանքին, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ոչ պատշաճ և օրենքով չհիմնավորված պահանջ է ներկայացվել /մյուս մասնակցի փաստաթղթերի պահանջի վերաբերյալ/, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի

համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2020թ. և 18.09.2020թ. պահանջ է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, որպեսզի վերջինս տրամադրի <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. շտկման արդյունքում ներկայացրած փաստաթղթերը, որը մինչ օրս գնահատող հանձնաժողովի կողմից չի կատարվել:

Ավելին վերը նշված հանգամանքի հետ կապված իր տեսակետն է ներկայացրել նաև լիազոր մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը /կցվում է/, որով մասնավորպես նշվում է.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ հայտնում ենք, որ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարի կողմից անհապաղ պետք է տրամադրվեն նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:»:

Ընկերությունը 19.10.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հավելել է նաև հետևյալը.

«Ուսումնասիրելով Նոր Գեղիի համայնքապետարանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԷՕ-2020/106 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը, այդ թվում նաև գնահատող հանձնաժողովի 17.09.2020թ. նիստի արձանագրությունը, հայտնում ենք հետևյալը.

1. «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 07.08.20250թ. ներկայաց¬ված բողոքով Ընկերությունը հայտնել էր, որ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի հիման վրա կատարված մի քանի շտկումների արդյունքում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում, այնուամենայնիվ, առկա էին թվաբանական սխալներ: Վերոհիշյալի հիման վրա Ընկերությունը խնդրել էր բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը: Նշված բողոքը 07.09.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 որոշմամբ բավարարվել էր և Ընթացակարգի գնահատողց հանձնաժողովը պարտավորեցվել է ր դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի 17.09.2020թ. նիստի արձանագրությամբ, ի կատարումն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 որոշման, նիստի արձանագրության 2.1. կետով դադարեցվել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը: Որից հետո նույն արձանագրության 2.2. կետով կայացվել է որոշում՝ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ հրավերով սահմանանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է մի քանի անգամ կիրառել ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից այդ կետի կրառումը պարտադրված չէր 07.09.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 իրավապարտադիր որոշմամբ, և վերոհիշյալ կետի պահանջների կիրառումը հանդիսանում է բացառապես գնահատող հանձնաժողովի ցանկությունը:

Մասնավորապես, Ընթացակարգի շրջանակներում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը շտկվել է երեք անգամ, փաստացիորեն գնահատող հանձնաժողովի մոտ առկա է «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 4 ծավալաթերթ-նախահաշիվ՝ մեկը ներկայացված հայտով, երեքը՝ տարբեր շտկման տարբերակներով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն կարևորագույն փաստի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջին անգամ շտկումը տվել այն հիմքով, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում առկա է եղել անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ: Եվ փաստացիորեն, առաջին շտկման արդյունքում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում արդեն պետք է վերացված լինեին բոլոր թվաբանական, հաշվարկային անճշտությունները, քանի որ գնահատող հանձնաժողովը, ըստ էության, ներկայացված շտկումը թվաբանական անճշտությունների մասով, համարել է բավարար, և երկրորդ անգամ շտկում է տվել միայն Ծավալաթերթ-նախահաշվի տող 16, տող 34 հանված լինելու և հետ տեղադրելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ծավալաթերթ-նախահաշվում, որտեղ պետք է կատարվեին թվաբանական հաշվարկների շտկումներ, նորից առկա են եղել թվաբանական սխալներ:

Պատվիրատուի կողմից ներկայացված և 2-րդ համարով անվանված թվաբանական սխալները շտկած ծավալաթերթ-նախահաշվում ԿՐԿԻՆ առկա են հետևյալ թվաբանական սխալները.

Ըստ շտկած ծավալաթերթ-նախահաշվի՝ ինքնարժեքը կազմում է 20264,7 ՀՀ դրամ, սակայն իրականում պետք է կազմի 20264,650 ՀՀ դրամ: Շահույթը նշված է 2229,1 ՀՀ դրամ, սակայն իրականում պետք է լինի 2229,117 ՀՀ դրամ: Եթե ընդունենք, որ մասնակիցը կատարել է կլորացում, ապա այս դեպքում էլ սխալ է նշված դրանց թվի հանրագումարը՝ արժեքը: Մասնավորապես, ծավալաթերթում նշված ինքնարժեքը՝ 20264,7 ՀՀ դրամը գումարած ծավալաթերթում նշված շահույթը՝ 2229,1 ՀՀ դրամը, կազմում է 22493,8 ՀՀ դրամ, մինչդեռ ծավալաթերթում արժեքը նշված է ոչ թե է 22493,8, այլ 22493,76 ՀՀ դրամ, ենթադրաբար, որպեսզի արժեքի գումարը համընկնի գնային առաջարկում նշված արժեքի հետ, սակայն այս դեպքում նորից առկա է ակնհայտ թվաբանական սխալ ընդհանուր հաշվարկի մեջ:

Արժեքի սխալ հաշվարկի արդյունքում սխալ է հաշվարկվել նաև ԱԱՀ գումարը, այն նշված է 4498,752, սակայն այն իրականում կազմում է 4498,750 ՀՀ դրամ:

Վերոհիշյալը վկայում է, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից թվաբանական հաշվարկների շտկում կատարած թիվ 2 ծավալաթերթ-նախահաշվում նորից առկա են եղել թվաբանական սխալներ, ինչը պետք է հիմք հանդիսանար հայտը մերժելու համար: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը պետք է ոչ թե 2-րդ անգամ տար հնարավորություն մասնակցին կատարել նոր շտկում՝ բաց թողնված տողեր ավելացնելու համար, այլ այն հիմքով, որ թվաբանական անճշտությունները հաշվարկի մեջ, այնուամենայնիv, չեն շտկվել, մերժեր «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը՝ շտկումը թերի կատարելու համար:

Որպեսզի բողոքներ քննող անձի համար ակնհայտ լինի, որ առաջին շտկված փաստաթղթում նորից առկա են եղել հաշվարկի սխալներ, խնդրում ենք ուսումնասիրել 2-րդ շտկում տալուց հետո մասնակցի կողմից ներկայացված և 3-րդ անունը կրող շտկված ծավալաթերթ-նախահաշիվը:

Մասնավորապես, ներկայացվածմ 3-րդ շավալաթերթ-նախահաշվում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից կրկին կատարվել են հաշվարկների ճշգրտում (եթե հաշվարկը ճշիտ է եղել, ապա ինչու է կատարվել կրկնակի թվաբանական ճշգրտում), երկրորդ անգամ շտկած

ծավալաթերթ-նախահաշվի ինքնարժեքը կազմել է արդեն 20264,650 ՀՀ դրամ՝ նախկին ծավալաթերթի 20264,7 ՀՀ դրամի փոխարեն: Շահույթը նշվել է 2229,11 ՀՀ դրամ՝ նախորդ 2229,1 փոխարեն: Միայն այդ ուղղման արդյունքում է, որ նոր ճիշտ է ստացվել ընդհանուր արժեքի գումարը՝ 22493,760 ՀՀ

Փաստորեն ստացվում է, որ մասնակիցը միայն ԵՐԵՔ անգամ թվաբանական ճշտումներ անելով՝ է կարողացել ներկայացնել ճիշտ հաշվարկ ունեցող ծավալաթերթ-նախահաշվի:

Նման պարագայում եթե մասնակցի կողմից երրորդ շտկման արդյունքում ներկայացվել է ճիշտ հաշվարկ ունեցող ծավալաթերթ-նախահաշիվ, ապա անհասկանալի է, թե գնահատող հանձնաժողովի 17.09.2020թ. նիստի արձանագրության 2.2. կետով ինչու է կայացրել որոշում՝ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ հրավերով սահմանանված պահանջների նկատմամբ անհամապատաս-խանությունների շտկման վերաբերյալ:

Ավելին, վերոհիշյալ որոշման մեջ ընդհանրապես արձանագրված չէ, թե մասնակցի կողմից որ փաստաթղթում ինչ անհամապատասխանություն է արձանագրվել և «Ֆրիներջի» ՍՊԸ-ն ինչ անհամապատասխանություն պետք է շտկեր:

Ավելին, արձանագրության 2.2. կետով կայացրած որոշումը չի բխում ոչ Ընկերության 07.08.2020թ. բողոքից, ոչ էլ տվյալ բողոքով 07.09.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 որոշման տրամաբանությունից:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի 17.09.2020թ. նիստի արձանագրության 2.2. կետով կայացրած որոշմամբ խախտվել է նաև ՀՀ կառավարության 526-Ն որոշման 43-րդ կետի պահանջները, քանի որ տվյալ կետը իմպերատիվ պահանջում է, որպեսզի հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատաս-խանությունները, ինչը տվյալ դեպքում ընդհանրապես չի կատարվել:

Գտնում ենք, որ այդ խախտումների հիմնավորմամբ հանձնաժողովի 17.09.2020թ. նիստի արձանագրության 2.2. կետով կայացրած որոշումը ոչ իրավաչափ է, ուստի այն պետք է դադարեցվի:

2. «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով (նամակի արտապումը կցվում է) խնդրել է գնահատող հանձնաժողովին իրեն տրամադրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստթղթերը, ինչպես

նաև նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ-նախահաշվի տիպային օրինակի պատճեն:

Վերոհիշյալ փաստաթղթերից ոչ մեկը չեն ներկայացվել, իսկ բողոքի քննության շրջանակներում ներկայացվել է միայն «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստթղթերը, սակայն պահանջված նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ-նախահաշվի տիպային օրինակի պատճեն այդպես էլ չի ներկայացվել, և չի էլ ներկայացվել բացատրություն, թե ինչու այդ փաստաթուղթը չի ներկայացվել:

Հարգելի պարոն Օհանյան, խնդրում ենք նկատի ունենալ, որ նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ-նախահաշվի տիպային օրինակի պատճենի ուսումնասիրությունը էական նշանակություն ունի սույն Ընթացակարգի, ինչպես նաև «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի գնահատման համար, քանի որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն ունի կասկածներ, որ Հրավերին կցված ծավալաթերթ-նախահաշվի օրինակելի ձևը տարբերվում է նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ-նախահաշվի տիպային օրինակից (կշիռների մասով), իսկ վերոհիշյալը հիմք է, թեկուզ դատական կարգով, նման Ընթացակարգը չեղարկելու համար:

Մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության պահանջած փաստաթղթերը չտրամադրելը առաջացնում է Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու իրավունքի խախտում:

Ավելին, «Տեղեկատվության ազատության» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը իմպերատիվ սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Մինչդեռ ինչպես երևում է, տեղեկատվություն տնօրինողը ընդհանրապես չի արձագանքել «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն ներկայացնելու խնդրանքին, ինչ էլ կարող է հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 46-րդ հոդվածով երաշխավորված պատվիրատուի և գնահատող գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու իրավունքի խախտմանը:»:

Ելնելով վերոգրյալից, «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրել «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից 16.09.2020թ. էլեկտրոնային եղանակով պահանջված փաստաթղթերը:

2. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.09.2020թ. նիստի արձանագրության 2.2. կետով կայացրած որոշումը՝ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ծանուցում ուղարկելու մասին՝ հրավերով սահմանանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. <u>Նոր Գեղիի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.09.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/14454-2020 գրությամբ դիմել է Նոր Գեղիի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.09.2020թ.-ին թիվ 730, 09.10.2020թ.-ին թիվ 739 գրություններով և ապա 22.10.2020թ.-ին՝ էլ. փոստի միջոցով տրամադրել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերը և հայտնել ներկայացված բողոքի վերաբերյալ իր առարկությունները: Մասնավորապես՝ Պատվիրատուն հայտնել է, որ *«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը գնահատող հանձնաժողովը*

իրականացրել է հրավերով սահմանված կարգով «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Համաձայն հրավերի 8.15 կետի հանձնաժողովի քարտուղարը արձանագրությունների լուսապատճեն ներկայացրել է մասնակիցներին 1 օրացուցային օրվա ընթացքում, որից հետո մասնակից «Սոլար էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից ոչ պատշաճ և օրենքով չհիմնավորված պահանջ է ներկայացվել:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/106 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Նոր Գեղիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.07.2020թ.-ին հայտարարվել է «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.07.2020թ.-ի թիվ 02 արձանագրության համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և հրավերի 8.7-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին: «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կրկին չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատաս-խանությունները: «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: «Ֆրիներջի» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ

զբաղեցրած մասնակից: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.07.2020թ.-ին «Ֆրիներջի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման մեջ նշել է, որ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և առաջարկում է մինչև սույն թվականի հուլիսի 29-ը Ժամը 13:00-ն նեկայացնել բանկային երաշխիքի անհամապատասխանությունը:

iv. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ պետք է դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և վերջինիս նկատմամբ կիրառել կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը՝ մանրամասն նկարագրելով «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա բոլոր անհամապատաս-խանությունները:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2020թ.-ի թիվ 03 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020 թվականի կայացրած որոշումը, որոշել է դադարեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման ընթացակարգի «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթները, կասեցնել գնահատման գործընթացը և նույն օրը սույն «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատաս-խանությունների շտկման համար:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.09.2020թ.-ին Մասնակցին ողւարկված ծանուցման համաձայն՝ հրավերով պահանջված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես հավելված 1.1-ում սխալ է լրացված տեխնիկական բնութագիրը: Ծավալաթերթ-նախահաշվում բացակայում են 16 և 34 տողերը, ինչպես նաև ինքնարժեքի և շահույթի գումարը ներառյալ ԱԱՀ չի կազմում գնային առաջարկով ներկայացրած գումարը /26992,512 դրամ/: Խնդրում եմ շտկել անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2020թ.-ի թիվ 04 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից շտկվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, որոշել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից (ընտրված մասնակից):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա ներկայացված հայտերը հանձնաժողովի կողմից մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Նոր Գեղիի համայնքապետարանի կողմից ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.07.2020թ.-ին հայտարարված «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկին կից՝ Ծավալաթերթ-նախահաշիվը եղել է սխալ լրացված՝ չի համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին: Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման հիման վրա,

«Ֆրիներջի» ՍՊԸ-ն սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթի շտկված տարբերակը՝ հիմք Հանձնաժողովի 17.09.2020թ.-ի թիվ 04 արձանագրությունը: Նշվածով պայմանավորված Մասնակցի ներկայացրած հայտը գնահատվել է հրավերի պահանջներին բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

Անդրադառնալով «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիրքորոշմանը, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությանը և Հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ ծավալաթերթ-նախահաշվում առկա են թվաբանական սխալներ, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 2.6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված և «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ծավալաթերթ-նախահաշիվը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված՝ հրավերին կցված

ծավալաթերթով՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները կիրառվել են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, իսկ դրանց շեղումը ավել կամ պակաս չի եղել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Մասնակցի կողմից ներկայացված հաստատված և լրացված ծավալաթերթ-նախահաշվով, վերջինս ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար ներկայացրել է ընդհանուր առմամբ 200 264 650 ՀՀ դրամ գումար, որին ավելացնելով շահույթի ~11%-ը և ԱԱՀ-ի 20%-ը, ամբողջացրել և ստացել է 26 992 512 ՀՀ դրամ գումար:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող ածը գալիս է այն եզրահանգման, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության դրույթների խախտում:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ Հանձնաժողովի 16.09.2020թ.-ին կայացված նիստի թիվ 04 արձանագրությամբ և դրա հիմքով «Ֆրիներջի» ՍՊԸ-ին Հանձնաժողովի կողմից 16.09.2020թ.-ին ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցմանը, Հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի կիրառման իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ... գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման

ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2020թ.-ի թիվ 03 արձանագրությամբ ընդունված որոշումները, մասնավորապես՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և ելնում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությունից:

Անդրադառնալով բողոքով ներկայացված 1-ին պահանջին՝ Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Ընկերությունը 16.09.2020թ.-ին դիմել է Պատվիրատուին և պահանջել ներկայացնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցման պատճեն և այլ փաստաթղթերը, եթե առկա են, և ինչպես նաև ծավալաթերթը և նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ նախահաշվի տիպային օրինակի պատճեն:

Բողոքներ քննող անձը վերոնշյալների հաշվառմամբ փաստում է, որ ներկայացված բողոքի քննության ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվել են բողոքի քննության համար անհրաժեշտ, ինչպես նաև բողոքաբերի կողմից վերջինիս ուղղված 16.09.2020թ.-ի գրությամբ պահանջված փաստաթղթերը, բացառությամբ՝ նախագծողի կողմից նախագծով ի սկզբանե կազմված ծավալաթերթ նախահաշվի տիպային օրինակի պատճենից: Նշվածի վերաբերյալ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել ու արձանագրել, որ այդ

փաստաթուղթը սույն բողոքի քննության համար որևէ էական նշանակություն չունի, համենայն դեպս, հակառակը ապացուցող որև փաստ բողոքաբերի կողմից չներկայացվեց, իսկ Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի իմաստով, այն սույն գնման ընթացակարգի շրջանակներում տրամադրման ենթակա փաստաթուղթ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Նոր Գեղիի համայնքապետարանի կողմից ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.07.2020թ.-ին հայտարարված «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում՝ գործել է իրավաչափ պահպանելով Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, որպիսի պայմաններում «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/106 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**